

Բ. Ն. ԱԻԼԱՌՄԴԱՄ

ԶԱՏԻԿԸ ԵՎ ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՈՆԸ

Եբրայական ծիսական օրացույցի՝ Եփատոսից իսրայելացիների ազատագրմանը մվիրված երեք մեծ տոներից առաջինը տոնվում էր գարնանը:

1. Ամվանումը: «Ջատիկն» օգտագործվում է և՛ տոնի համար, որպես մի ամբողջության (Ելք 2:48 և այլն), և՛ պատշաճ զոհաբերության (Ելք 12:11; Երկրորդ Օրենք 16:2 և այլն): «Ջատիկ» թարգմանաբար նշանակում է «անցնել վրայով», այսինքն՝ «խնայել» (Ղևտ. 23:25, Թուեր 28:16, 33:3, Հեսու 5:11 և այլն): Եբրայերեն այլ տերմիններ են՝ «Ջատիկի տոնը» (Ելք 34:25; Եզեկիել 45:21) և «Տիրոջ զատիկի զոհը» (Ելք 12:11, 27, Թուեր 28:16):

Յոթանասնյոթ թարգմանության մեջ և Նորկտակարանյան տերմինը *πασχα*-ն է:

Եբրայերենում «Ջատիկ» կամ «*Psia*» (*Passover*) ամվանումն օգտագործվում էր տարվա այդ եղանակին կատարվող տոների ամբողջ շարքի համար: Այս ամվանումը լայն տարածում է գտել մոտավորապես երկրորդ դարից: Միշնայում «Պեշահիմ» (*Pesahim*) տրակտատում («Պեշահի» (*Pesah*-ի ձևի) հոգնակին հավանաբար վերաբերում է անհատական զոհաբերության գառներին, համեմատելի՝ Բ Մնացորդաց 35:7-ի հետ) և՛ որպես օրինակ է բերված, և՛ որպես այս սովորության հիմք է ծառայում: Միակ տերմինը, որն ընդհանուր ամվանում է բոլոր տոների համար՝ ներառյալ այն արարողությունները, որոնք վերաբերում են Բաղարջակերացին, որին, իսկապես, մվիրված են տրակտատի առաջին երեք գլուխները: Հովսեպիոսն անդրադառնում է «Բաղարջակերաց տոնին», որպես բնորոշ ամվանում այդ բոլոր տոների համար, սակայն երկու տեղ մա մի կետ է ավելացնում, «որը կոչվում է Ջատիկ»՝ կարծես թե մատնանշելով լայն օգտագործումը (Հովսեպ. Հրեից Պատերազմ II.xiv.3; VI.ix.3; Եբրայական Հմայտություն. XVII.ix.3; XX.v.3):

Ջատիկը, որպես ընդհանուր մի ամվանում, մատնանշում է Միշնան, ինչպես Հովսեպիոսը՝ բոլոր արարողությունները համարելով մեկ ամբողջական տոնի մասեր: Սակայն սա միշտ այսպես չէր: Ավելի վաղ, Հին Կտակարանում, ինչպես նաև Նոր Կտակարանում, «Ջատիկը» և «Բաղարջակերաց տոնը» (Մարկոս 14:1) օգտագործվում էին ծեսերի առընչությամբ: Երբեմն մեկը և երբեմն մյուսը կիրառվում էր ամբողջ շարքի համար: Բայց Ջատիկը հիմնականում վերաբերում էր առաջին օրվա մախօրյակին՝ ամսվա տասնչորսերորդ օրվա (Ղևտ. 23:5), երբ տեղի էր ունենում զատկական գառի զոհաբերությունը, մինչդեռ Բաղարջակերաց տոնը նշվում էր յոթ օր շարունակ (Ղևտ. 23:6): Սա հիշեցնում է, որ արարողությունների մի համակարգում գոյություն ունեին երկու առանձին միավորներ կամ տոներ: Բայց այս տարբերակումը միշտ չէ, որ հետևողականորեն պահպանվում էր (համեմատելի՝ Ղուկաս 22:7-ի հետ):

Քանի որ այդ երկու արարողությունների ժամանակները համընկնում էին, ինչպես նաև այն պատճառով, որ Ջատիկը տևում էր միայն մեկ գիշեր, սա համարյա անհնար էր: Օրինակ՝ թթխմորից անջատումը պետք է ավարտվեր մինչև զատկական գառի զոհաբերումը (Երկրորդ Օրենք 16:4; Պեշահիմ 1.1-4), հետևաբար Ջատիկի կերակուրը նաև Բաղարջակե-

րացի կերակուր էր (Ելք 12:8), և Ջատիկ տերմինն օգտագործվում էր բոլոր տոմ օրերի համար (Երկրորդ Օրենք 16:2-3; Եզեկ. 45:21-25):

Ելք 23:15-ում, որի մի մասը հավանաբար Իսրայելի պահպանված ամենահին ծիսական օրացույցի մի օրինակ է, խոսվում է Բաղարջակերաց տոմի մասին (համեմատի՛ր Երկրորդ Օրենք 16:16-ի հետ): Հետազոտողների համար վիճելի է եղել այն հարցը, թե արդյո՞ք լահվեական խմբագրությանը վերագրվող և միապետության վաղ ժամանակաշրջանին վերաբերվող այս օրացույցի կազմության ժամանակ Ջատիկ զոհաբերությունն ընդհանուր առմամբ արդեն Իսրայելի համայնքի պաշտամունքի մի մասն էր:

Ուելհաուզենից սկսած մեծապես ընդունված տեսակետն այն է, որ մինչև Հոսիասի բարեփոխումները՝ և Երկրորդ Օրենքում դրան առնչվող օրենքները, Ջատիկը, որպես Բաղարջակերացից առանձին տոմ, ընտանեկան տոնակատարություն էր, ոչ թե Իսրայելի ազգային կյանքին վերաբերվող առանձին մի ծես: Թագավորաց Բ 21-23-ից երևում է, որ Ջատիկն ազգովին չէր տոնվում միապետության շրջանում և հարցականի տակ է դրվում այն ենթադրության պատմական հավաստիությունը, որ Դատավորաց շրջանում կային այդպիսի ազգային տոնակատարություններ:

Բոլորի կողմից ընդունված տեսակետով այս տոնը կազմված է սկզբնապես առանձին կատարված երկու տարբեր բաղադրիչներից և դրանք երկուսն էլ ունեն մախաիսրայելական պատմություն՝ Ջատիկը, որպես մոմադիական հովիվների ծես, իսկ Բաղարջակերացը՝ քանանական, որպես սպասվող բերքի հետ կապվող տոմ: Ինչպես Սուրբ Գրքում է ասվում, Մովսեսը խնդրեց փարավոնին, որ նա ազատ արձակի Իսրայելի զավակներին, որպեսզի նրանք կարողանան Տիրոջ տոնը մշել անապատում (Ելք 5:1, 10:9): Այստեղից կարելի է ենթադրել, թե այս «տոնը» Ջատիկի մախաիսրայելական ձևն էր, հավանաբար՝ հովիվների տոնը: Այստեղից էլ Ուելհաուզենը պնդում է, թե «եղբւր տոմի առիթը չէ, այլ տոմն է եղբի առիթը»:

2. Նորկտակարանյան ժամանակաշրջանում. Մինչև Երուսաղեմի տաճարի կործանումը՝ մ. թ. 70 թվականին, Ջատիկն ուխտի տոմ էր: Այն ուներ Ծաբաթների և Տաղավարահարաց տոներին բնորոշ առանձնահատկություններ: Ժողովրդակալությամբ և հրեական սփյուռքի բոլոր երկրներից եկող ուխտավորների թվով այն համեմատվում էր միայն վերջինի հետ: Հաշվումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տարի, տոմի համար, Երուսաղեմ կարող էին գալ ավելի քան հարյուր հազար ուխտավորներ: Հովսեփոսի հաղորդած թվերն անհավանական են թվում (Հրեից Պատերազմ. II.xiv.3; VI.ix.3), սակայն նրա մատնաշումը, որ ընդվզումները, որոնց միջամտում էր տիրապետող ուժը, Նորկտակարանյան նմանօրինակ անդրադարձներից էլնելով, հավանական է թվում, որ պետք է տեղի ունեցած լինեին (Մարկոս 15:6 և 15):

Տաղավարահարաց տոմի հետ համեմատած՝ Ջատիկն ավելի հանդիսավոր տոմ էր: Ջատիկի մախօրեի արարողությունները բաղկացած էին երկու պատշաճ մասերից՝ տաճարում գառների և այծերի ծիսական զոհաբերումից՝ զոհասեղանին խորհրդակատարական արյուն ցանելով և ընտանեկան ճաշկերույթից ու դրա համախմբվածությունը շեշտող դերից, և պատմական հիշատակումից: Ժամանելիս քաղաքում կացարան չունեցող ուխտա-

վորների բազմության համար առաջին կարևոր նախապատրաստություններն էին՝ «սեմ-յակ» ձեռք բերելը (Մարկոս 14:15) և զոհաբերության գառ գնելը:

Տոնի ժամանակ սուրբ քաղաքում աշխուժանում էր առևտուրը: Տոնի համար հարկավոր էին գինի և համեմունքներ, ու շատերը, ովքեր գալիս էին դրսից, իրենց հետ վաճառքի համար բերում էին արտերկրյա ապրանքներ՝ տոնի ժամանակ քաղաքում առաջացնելով «առևտրային եռուզեռ» (Մտթ. 21:12): Մենյակը և գառը ձեռք էին բերվում «ընկերության» կամ ընտանեկան խմբերի գլխավորի կողմից: Խմբի համար թույլատրելի նվազագույն թիվը տասն էր (Պեշ. 7.13): Քաճախ ընկերությունները շատ ավելի մեծ էին: Քանի որ գառը պետք է ճաշակվեր ամբողջությամբ, նրա չափը կախված էր խմբի անդամների թվից: Մեծ խմբերի դեպքում, յուրաքանչյուր անդամ զոհաբերության գառից նախ ստանում էր խորհրդանշանական մի կտոր: Յուրաքանչյուրը պետք է ուներ ձիթապտղի մեծության միս: Դրանից հետո մատուցվում էին ոչ ծիսական կերակուրներ:

Տոնի ժամանակ տաճար էին գալիս քահանաների բոլոր քսանչորս խմբերը, չնայած սովորաբար միայն մեկն էր լինում: Առաջին ծիսական գործողությունը թթխմորի հեռացումն էր: Սա կատարվում էր առավոտյան, և դրա ավարտը մատնանշվում էր քահանաների կողմից թթխմորի ծիսական այրումով: Աշխատանքը դադարում էր կեսօրին: Տաճարում ամենօրյա կեսօրվա զոհաբերությունը մատուցվում էր սովորականից մեկ ժամ շուտ (Պեշ. 5.1): Մոտավորապես ցերեկվա ժամը 3-ին սկսվում էր Զատիկի գառների զենումը: Դևտագիները եռափող շեփորների ձայներով ազդարարում էին արարողության սկիզբը:

Մինչ դևտագիները երգում էին Ալելուան, մյուսները զոհաբերում էին անասուններն ու արյունը հեղում քահանաների ձեռքերում բռնած ոսկե կամ արծաթե պնակների մեջ: Հետո մաշկում և համեմում էին կենդանիների: Քահանաները միևնույն ժամանակ ցողում էին արյունը մեծ զոհասեղանին և այրում էին ճարպի կտորները զոհասեղանի վրա (Պեշ. 5.5-10): Արյան ցանումը զոհաբերության գործողության գլխավոր մասն էր, հավանաբար սկզբնապես այն մի ծես էր՝ պաշտպանելու կամ փոխարինելու անդրանիկներին: Բայց այժմ այն միջոց էր հռչակելու կամ իրականացնելու Աստծո փրկագործությունն իր ամբողջ ժողովրդի համար:

Համեմված կենդանիները, չկոտրատված ոտքերով, գլուխները կպած մսեղիքներին, յուրաքանչյուրը փաթաթված իր կաշվի մեջ, վերադարձվում էին երկրպագողներին: Յուրաքանչյուր ընկերություն գնում էր իր տուն կամ սեմյակ: Կենդանին շամփրված էր լինում նույն փայտին և խորովվում էր դյուրակիր կավե հոցոցում:

Կերակուրը մատուցվում էր ցածր սեղանիկների վրա, որոնց շուրջ, բարձրի վրա, նստում էին մասնակիցները (համեմատի՛ր Մտթ. 26:20-ի հետ), ինչպես հանդիսավոր խընջույքին, և բոլորի հագին տոնական սպիտակ զգեստներ էին լինում: Աղոթքից հետո՝ գինու առաջին բաժակով, ազդարարվում էր ճաշակման սկիզբը: Դրանից հետո սկսում էին ուտել պնակներում դրված գառը՝ պատրաստված համեմունքներով, տորթած մրգերի և ընկույզների մածուկով: Հաջորդող երկրորդ գինու բաժակով ընտանիքի «որդին» ծիսական մի հարց էր տալիս.

«Ինչո՞ւ է այս գիշերը տարբերվում մնացած գիշերներից: Սա ներկայացվում էր Եգիպտոսի գերությունից իսրայելացիների ազատման պատմության երգով, ապա՝ Իսրայելի ա-

զատման և հետագա փորձությունների պատմությամբ ու ավարտվում՝ հոռմեական տիրապետությունից երկրի ազատման համար աղոթքով: Այս աղոթքից հետո, որը հետագայում փոխվել է Երուսաղեմ վերադառնալու համար աղոթքի, ավարտվում էր պաշտոնական հիշատակումը: Հավաքույթները կարող էին շարունակվել ոչ պաշտոնական ձևով, կամ մի խմբի անդամները կարող էին գնալ և ողջունել մյուս խմբի անդամներին, բայց մինչ այս պահը, ծիսական ընթացքը պահպանվում էր խստորեն (Պեշ. 9.10):

Տաճարի ավերումով Ջատիկը դադարեց զոհաբերության ծես լինելուց, այն շարունակեց լինել Աստծո փրկագործության սուրբ հիշատակություն: Ջոհաբերությունը դեռ գոյություն ունի Հորդանանում՝ Նաբլուսում, սամարացիների մվագող համայնքում: Այս աղանդավոր հրեաների խումբը մոտավորապես մ. թ. ա. Դ դարում Երուսաղեմում բաժանվել է տաճարից: Նրա և՛ զոհաբերության, և՛ համայնական ճաշկերույթի արարողությունն ամենայն հավանականությամբ պահպանում է այնպիսի ձևեր, որոնք ավելի վաղ են թվագրվում, քան վերևում նկարագրվածները: Կենդանիներին մորթում էին Գերասիմ լեռան ստորոտին, ճիշտ արևամտին, ոչ թե ավելի ուշ (Ելք 12:6): Սաղմոսներ երգելու փոխարեն այն ուղեկցվում էր Ելք 12-ի ընթերցմամբ: Ջոհաբերությունը ճաշակում էին մինչև կեսգիշեր (Ելք 12:11,29): Օգտագործում էին բաղարջ հաց և համեմունքներ: Սակայն չէին խմում գինի և չէին երգում:

Օտտ դեպքերում, կատարման ընթացքն ավելի շատ համապատասխանում է սուրբգրային կարգադրություններին, օրինակ՝ Ելք 12-ին, քան Հիսուսի օրոք Երուսաղեմի արարողություններին. մի հավաստում, ի թիվս այլ վկայությունների, որ անցնող երեք հազար տարիների կամ ավելի երկար պատմության ընթացքում, որպես իսրայելական արարողություն՝ Ջատիկը, թեև ամենշան կերպով, սակայն չի դադարել փոփոխվելուց: Նորկտակարանյան ժամանակներում, տոնի կապը սպասվող բերքի հետ, մասնավորապես ինչպես նկարագրված է խրճի արարողության մեջ, թվում է, թե ամենշան դեր է խաղացել: Դա տոնի մի մասն է, որ վերջին ժամանակներս վերակենդանացել է Իսրայելի պետության մեջ:

Տաճարի ավերումը, վերացնելով զոհաբերության խորհրդակատարական գործառնությունը, ամխուսափելիորեն ազդեց տոնի վրա՝ այն դարձնելով Իսրայելի անցյալում Աստծո կատարած մեծագույն գործերի զուտ պատմական հիշատակում: Այն դարձավ Իսրայելի տոնն ազատության համար: Այն երբևէ չի դադարել Իսրայելի հույսն ապագայի նկատմամբ արթնացնելուց. սա մատնանշվում է Ջատիկի սեղանի շուրջ օրհնության բաշխմամբ, որն ունի դարերի հնություն և մինչ օրս ասվում է. «Գալ տարին Երուսաղեմում»: Եվ մինչ Ջատիկը հիմնականում պատմական հիշատակություն է, նրա հավատարմորեն կատարումը պարտադիր է աղոթքի իրականացման համար: Մյուս կողմից, Նոր Կտակարանն ընդգծում է Ջատիկի՝ որպես զոհաբերության խորհուրդը: Քրիստոս՝ Տիրոջ ճշմարիտ Ջատիկն է. փրկագործությունը: Այն սկսվել է խորհրդակատարական գործողությամբ, որը պատմականորեն իրականացվում է Քրիստոսի խաչելությամբ:

3. Հիմնականարանյան հղումներ. Պաշտամունքային սովորությունների և ավանդույթների հետ կապված պատմական քննադատության այժմյան մեթոդները համոզիչ կերպով ցույց են տվել, որ համեմատաբար հին բնագրերը կազմում են ավելի հին ձևեր կամ վերամեկնում են ավելի հին սովորություններ: Երկրորդ, այն բնագրերում, ուր վկայակոչվում է

Զատիկի պատմությունը, «տոների» մասին մի շարք հղումներ կան (Թագավորաց Ա 8:2, Եսայի 29:1, 30:29, Օվսե 2:11, 9:5, 12:19, Ամովս 5:21, 8:10), որոնց մեծամասնությունն ինչ-որ ժամանակ զուգակցվել է Զատիկի հետ: Սա հատկապես ճիշտ է Եսայի 30:29-ի համար: Այնուամենայնիվ, չի կարելի ասել, որ այս վիճելի հարցը վերջնականորեն լուծված է. ավելի հավանական է թվում, որ այս ամբողջը պետք է կապված լիներ Տաղավարաբարաց տոնի հետ:

Զատիկին և Բաղարջակերացին վերաբերող Հիմնականարանյան Այութի ամենամեծ մասը գտնվում է Ելք 12:1-13:16-ում: Այն կազմում է եգիպտացիների անդրամիկների կոտորման և դրան հաջորդող իսրայելացիների մեկնման պատմության մասը՝ նպատակ ունենալով զուգակցել երկու արարողությունները իսրայելի պատմական ազատման հետ: Օեշտվում է, որ երկուսն էլ հաստատվել էին Եգիպտոսում և տոնվում էին հենց տասներորդ պատժի և իսրայելացիների մեկնման ժամանակ «այդ գիշեր» (Ելք 12:12, համեմատի՛ր Ա Կորնթ. 11:23-ի հետ) ու «հենց այդ օրը» (Ելք 12:17, 13:3-4):

Ելից 12-րդ գլխի սկզբում ասվում է, որ Զատիկի սահմանումը հաստատում է իր արարողության ամիսը, որպես «տարվա առաջին ամիս» (համար 2): Այլուր այս ամիսը հայտնի է որպես Աբիբ (Ելք 13:4, 23:15, 34:18, Երկրորդ Օրենք 16:1)՝ ճշմանկեղով հասկեր, ավելի ճիշտ գարու խրձեր: Ամենայն հավանականությամբ իսրայելի տարին սկզբնապես սկըսվում էր աշնանը (համեմատի՛ր Տաղավարաբարաց տոնի հետ): Բաբելոնյան գերության շրջանում ընդունվեց մվաճողի օրացույցը: Բայց սա ընդունելի դարձվեց՝ օգտագործելով այն որպես իսրայելի պաշտամունքի օրինակի լուսաբանում: Սկզբից չէին օգտագործվում բաբելոնյան ամսանունները: Զատիկի ամիսը կոչվում էր «առաջին ամիս», ոչ թե Նիսան, ինչպես ավելի ուշ: Բացի այդ, սա առաջին ամիսն է՝ շնորհիվ այն փաստի, որ տոնը տեղի է ունենում այդ ժամանակ: Ծիսական օրացույցի այս վերականգնումը հավանաբար կատարվել է Գերության ժամանակ, և դա քառանյակաձև դպրոցի աշխատանքն էր:

Այստեղ ծեսը մկարագրելու համար օգտագործված ճշգրիտ բառերն են. «Դա Տիրոջ գաղտնիկն է» (... Ելք 12:11, 27): Նույն ձևը երկու անգամ հանդիպում է սերտորեն կապված այլ հատվածներում (Ղևտ. 23:5, Թուեր 28:16): Այսօրինակ օգտագործման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ չկա գործողություն ցույց տվող բայ, ինչպես շատ հատվածներում, ուր ասվում է, որ Զատիկը «կատարվում է» (Թուեր 9:2 և այլն), «մոռվում է» (Երկրորդ Օրենք 16:2 և այլն), «գոհվում է» (Բ Մնաց. 35:6 և այլն) կամ «ուտվում է» (Բ Մնաց. 30:18 և այլն): Թվում է, թե անունն անմիջականորեն վերաբերում է Աստծո փրկագործությանը՝ Նրա անցնելուն և Եգիպտոսի անդրամիկներին պատուհասելուն (Ելք. 12:12), կամ մյուս կողմից՝ վրայով անցնելուն և «իսրայելացիների տները» խնայելուն (Ելք. 12:27):

Նորկտակարանյան ժամանակաշրջանի Զատիկի հետ հարաբերած՝ այս հատվածը երևան է հանում և՛ նմանությունները, և՛ տարբերությունները: Տոնի ընտանեկան նախապատրաստության համար միևնույն պահանջներն են դրված. չնայած՝ «ընտանիքը պետք է բաղկացած լինի առնվազն տասը հոգուց» ասելու փոխարեն, այն պնդում է, որ ընտանիքի գլխավորը պետք է միանա իր «հարևանին» (Ելք 12:4), որպեսզի իր խումբն այնքան մեծ լինի, որ կարողանա գաղը լիովին ճաշակել: Կարգադրությունը թվում է, թե կատարվել է բնական ընտանեկան միությունների հիման վրա և ոչ թե Միջնայի դարաշրջանի

«ընկերությունների»: Դեռ ավելին, այստեղ անգամ ակնարկ չկա, որ Զատիկն ուխտի տոն է և ոչ էլ ճուշմիսկ՝ մի քանի ընտանիքների համար որևէ ընդհանուր սրբավայրի մասին:

Ինչպես Նորկտակարանյան ժամանակաշրջանում, զոհը պետք է լիներ արու, գառ կամ ուլ և ամառատ. երկու դեպքում էլ ծեսը տեղի է ունենում 14-ին, չնայած ավելի ուշ շրջանի շարադրանքներում բաց է թողնված ամսվա տասներորդ օրը զոհն ընտրելու մասին կարգադրությունը: Անգամ պարզ հղում չկա զոհաբերության ժամանակ քահանաների ու ղեկավարների ներկայության մասին: Միջման ակնհայտորեն փոխում է «Իսրայելի ամբողջ համայնքի հավաքույթ» (Ելք 12:6) արտահայտության իմաստը՝ ընդունելով այն որպես երեք ընթացուղիների երաշխիք, որոնք անհրաժեշտ էին տաճարում զոհաբերություն մատուցելու համար (Պեժ. 5.5):

Գառներին երեկոյան զենելու խորհուրդն ավելի ճշգրիտ է կատարվում սամարացիների ծեսում. երբայերեմը ճշգրիտ թարգմանվում է որպես մթնշաղ և չի կարող ամբողջովին համընկնել ավելի ուշ շրջանի երեկոյան զոհաբերություն կատարելու հետ, մասնավորապես է թվում, ինչպես սամարացիների դեպքում էր, որ համայնական ընթերիքը մոտավորապես կեսգիշերին էր, ոչ թե երեկոյան, ինչպես ավելի ուշ՝ Նրուսաղենում:

Այնուամենայնիվ, քահանայական այս շարադրանքի և ավելի ուշ շրջանի փորձառության միջև ամենացատուն տարբերությունն այն է, որ արարողությունը չնայած ակնհայտորեն ուներ զոհաբերության բնույթ, սակայն այն ամբողջապես ընտանեկան արարողություն էր: Սրբավայրի մասին որևէ հստակ հղում չկա, և զոհասեղանին մոտենալու փոխարեն «մի քիչ արյուն» էր քսվում (Ելք 12:7, համեմատի՛ր 22-ի հետ) դրան սեմին և դրան շրջանակի վերևը այն տան, ուր մշվում էր տոնը:

Ելք 12:21-23-ը համապատասխանում է 6-7, 12-13 համարների հետ, սակայն կարող է ներկայացնել խնդրի ավելի հին տարբերակը: «Ավագան» բառը թարգմանաբար մասնավորապես է «շեմք» կամ «սեմ»: Սա հանգեցնում է շատ հավանական այն եզրակացությանը, որ զենումը կատարվում էր տան դռան շեմին, և որ արյունը միջոց էր, որով տունն ուխտ էր կնքում Տիրոջ հետ և ծառայում էր որպես չարիքի հեռու լինելու միջոց: 21-23 համարների կարգադրությունները հատկապես սարսափազդու բնույթ են կրում, մասնավորապես տոնությունը սարսափելի գիշերվա համար է, ոչ ոք «մինչև առավոտ իր տան դռնից դուրս չգա», արյունը տեսնելով՝ Տեր Աստվածն անցնելիս կազատի մշված տները և ետ կպահի ոչընչացնողին:

Թվում է, թե ծեսը ծառայում է և՛ որպես մշան Տիրոջ համար, և՛ որպես պաշտպան գիշերային դեպք: Սա պարզ ընտանեկան տոնակատարություն չէ, այլ՝ ամենահանդիսավոր արարողությունը: Նաև, ընդհանրապես, համարվում է, որ Զատիկի այս ձևն արյան միջոցով միացված է ինչ-որ չարխափան ծեսի՝ հավանաբար սկզբնապես գործադրված հովիվ քոչվորների կողմից և կիրառված վտանգավոր եղանակին կամ չարքի գիշերը:

6-7, 12-13 համարներում երկուսը որոշ չափով մվագեցված է. մշված չեն ավագանը և դռան վերևի շրջանակը և ոչ էլ ոչնչացնողը: Ինչևէ, կառուցվածքն ու մոտիվը մույնն են. Տեր Աստված կանգնի Եգիպտոսի միջով «բոլոր անդրամիկներին պատուհասելու» (համար 12) կամ պարզապես «եգիպտացիներին կոտորելու համար» (համար 23): Զատիկն

առիթով Ջատկի սահմանումը: Անդրադիկների փրկման կամ մվիրաբերման պահանջի գոյությունը Բաղարջակերացի քննարկման համատեքստում թվում է, թե ցույց է տալիս, որ դրա՝ Երկրորդ Օրենքի այս մեկնությունը խորապես կրում է մոմադիական և Ջատկի ավանդույթների ազդեցությունը:

Երբ մենք կարդում ենք Հեսուի 4:19-23 և հատկապես 5:10-12 հատվածները, որպես Ջատկի ավանդույթը Գեբաղում, տեսնում ենք, որ այն տոմում էր և՛ իսրայելացիների՝ Եգիպտոսից դուրս գալը, և՛ Ավետյաց Երկրի ժառանգումը, ինչպես ցույց է տալիս Հորդանանն անցնելու զուգորդությունը Ծովն անցնելու հետ: Այն տեղի է ունենում տասներորդ օրը, այն օրը, երբ Ելք 12:3-ում ընտրվում է Ջատկի գաղը: Դեռ ավելին, Բաղարջակերաց տոմը համարվում է իսրայելացիների՝ անապատում գտնվելու հիշատակություն՝ որոշ չափով փոխելով սպասվող բերքի հետ կապվելու իր բնույթը: Այն խորհրդանշում է անապատային մանանայից անցումը Քանանի երկրում պտուղ ուտելուն: Բաղարջակերաց ծեսի սահմանումը Ելք 12:13-ում համընկնում է Ջատկի սահմանման հետ, որտեղ այն մախորդում է երկրի ժառանգմանը, որի գրավականն է հանդիսանում: Աղանձի՝ Ավետյաց Երկրում առաջին ուտելիքի ուտելը, ենթադրվում է գարու խրձեր հնձելը (Ղևտ. 23:14)՝ մոր բերքը պիտանի դարձնելով ուտելու համար: Տոմի մեջ, ինչպես այստեղ մկարագրված է, Բաղարջակերացի արարողությունը խորապես վերակողմնորոշված է ինչպես ոչ մի այլ տեղ՝ մշելու Իսրայելի սուրբ պատմությունը նրա մեծ իրադարձություններից մեկի հիման վրա:

Թարգամությունն ըստ Ասրվածաշնչի
Մեկնությունների Հանրագիտարանի,
հրապ.՝ 1981 թ. ԱՄՆ.

Անգլերենից թարգմանեց՝

ՍՈՒՄԱՆԱ ԱՐԶԱՔԱՆՅԱՆԸ